ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1.

2020թ. օգոստոսի 31-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2020-21 ուս.տարվա տարեկան ծավալ-ծանրաբեռնվածության հարցի քննարկում.
2. 2020-21 ուս.տարվա 1-ին կիսամյակի դասացուցակի հաստատում.
3. 2020-21 ուս.տարվա էլեկտրոնային դասընթացների հարցի քննարկում.
4. 2020-21 ուս.տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատում.
5. Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ – 2020-21 ուս.տարվա տարեկան ծավալ-ծանրաբեռնվածության քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչի պ/կ Ն.Սահակյանը ներկայացրեց 2020-2021 ուս.տարվա ամբիոնի ծավալ ծանրաբեռնվածության և դասաբաշխման նախնական տարբերակը, որը հեռակա ուսուցման ընդունելության արդյունքներից հետո կփոփոխվի, սակայն հաստիքակազմի փոփոխություններ չեն լինի: Ամբիոնի ընդհանուր ժամաքանակը 6712 ժամ է, որից թափուր է մնացել 1383 ժամ: Ամբիոնի 5329 ժամը բաշխվել է 8 դասախոսների վրա, միջին ծանրաբեռնվածությունը հաշվարկվել է նվազագույնով՝ 750-800 ժամով, հաստիքակազմում կրճատումներից խուսափելու պատճառով: Ամբիոնում կա 6,75 հաստիք, 6 դասախոս 1-ական հաստիքով, 1 դասախոս 0,5 հաստիքով, 1 դասախոս 0,25 հաստիքով, արդյունքում նախորդ տարվա հաստիքաչափը պահպանվել է:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – 2020-21 ուս.տարվա 1-ին կիսամյակի դասացուցակի հաստատման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը անդրադարձավ առաջին կիսամյակի դասացուցակին և նշեց, որ պարապմունքները կազմակերպվելու են հիբրիդային եղանակով, առցանց և առերես տարբերակներով՝ դասախոսությունները առցանց, գործնական պարապմունքները առերես՝ կապված համաճարակային իրավիճակի հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2019-2020 ուս.տարվա առաջին կիսամյակի դասացուցակը և քննական տոմսերը:

ԼՍԵՑԻՆ 3. –. 2020-21 ուս.տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային դասընթացների և առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն. Սահակյանը նշեց, որ սեղմ ժամկետներում պետք է տեղադրվեն 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները, հրավիրվեն ուսանողները, ինչպես նաև ներբեռնվեն դասախոսությունները: Առաջարկվեց նաև դասընթացները ներբեռնել լրացուցիչ տեսանյութերով, տեսասահիկներով՝ ուսումնական նյութերի յուրացումը առավել լիարժեք դարձնելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2.

2020թ. սեպտեմբերի 22-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Հեռակա ուսուցման համակարգի բոլոր կուրսերի էլեկտրոնային դասընթացների ստեղծման վերաբերյալ հարցի քննարկում.
2. Հեռակա ուսուցման համակարգի էլեկտրոնային խորհրդատվությունների ժամկետների հաստատում.
3. Առցանց դասախոսությունների ընթացքի և դրանց վերահսկողության վերաբերյալ հարցի քննարկում.
4. Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման համակարգի բոլոր կուրսերում էլեկտրոնային դասընթացներ ստեղծելու վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսական անձնակազմին տեղեկացրեց, որ հեռակա ուսուցման համակարգի բոլոր կուրսերը անցնելու են էլեկտրոնային ուսուցման: Ըստ դասաբաշխման բացվելու են էլեկտրոնային դասընթացներ, կցվելու են համապատասխան ֆակուլտետի դեկանատի ներկայացուցիչը, դասավանդող դասախոսը կամ դասախոսները և ուսանողները: Տեղադրվելու են ռարկայական նկարագրերը, դասախոսությունների փաթեթները, ուսումնական նյութերը, միջանկյալ ստուգման հարցաշարերը: Հեռակա ուսուցման բոլոր կուրսերում ըստ ֆակուլտետի կողմից ներկայացված ժամանակացույցի անցկացվելու են առցանց խորհրդատվություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – Առցանց դասախոսությունների ընթացքի և դրանց վերահսկողության վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսներին տեղեկացրեց, որ համավարակի հետ կապված համալսարանում դասերը կազմակերպվելու են առցանց, դրանց անցկացման վերահսկողությունը դրված է էլեկտրոնային կրթության կառավարման վարչության վրա, այդ

իսկ պատճառով դասախոսներին հորդորեց պարապմունքները կազմակերպել դասացուցակում նշված ժամին համապատասխան և կատարել նշումներ հաճախումների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3.

2020թ. նոյեմբերի 2-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի առցանց նիստ՝ բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Հեռակա բակալավրիատի 1-ից 3-րդ և առկա բակալավր 1-4 կուրսերի առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի իրազեկում.
2. 1-ին կիսամյակի միջանկյալ ստուգումների ձևաչափի քննարկում.
3. 1-ին կիսամյակի դասալսումների դիտարկումների քննարկում.
4. Ամբիոնի դասախոսների կողմից հրատարակած հոդվածների, գիտաժողովի նյութերի, գրքերի, ձեռնարկների մասին տեղեկատվության տրամադրում (նշել նաև այն հոդվածները, որոնք ներկայացման պահին հրատարակված չեն, սակայն մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը հրատարակվելու են).
5. Աշխատակիցների առողջության ,,Կամավոր ապահովագրության,, պայմանագրի հետ ծանոթացում և քննարկում.
6. Երկրում ռազմական դրության հաստատման և դրա հետ կապված ուսուցումը հեռահար դարձնելու վերաբերյալ հարցի քննարկում.
7. Դասընթացներում էլեկտրոնային մատյանների կիրառման վերաբերյալ հարցը.

ԼՍԵՑԻՆ – Հեռակա բակալավրիատի 1-ից 3-րդ և առկա բակալավր 1-4 կուրսերի առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի և 1-ին կիսամյակի միջանկյալ ստուգումների ձևաչափի քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի դասախոսներին Ն.Սահակյանը հայտնեց, որ ստացվել է շրջաբերական առկա և հեռակա բակալավրիատի 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերման վերաբերյալ: Շրջաբերականի էլեկտրոնային տարբերակը ուղարկվել է ամբիոնի բոլոր դասախոսներին, որտեղ հստակեցված է ուսումնական գործընթացների կազմակերպման ժամանակացույցը՝ առցանց և առերես իրականացմամբ: Ն.Սահակյանը հայտնեց նաև, որ իրավիճակի հետ կապված փոխվել է միջանկյալ ստուգումների կազմակերպման ընթացքը, 2 միջանկյալ ստուգմամբ ավարտվող դասընթացներում 2 միջանկյալ ստուգման փոխարեն իրականացվելու է 1 միջանկյալ ստուգում և էլեկտրոնային տեղեկագրերում 2-րդ միջանկյալ ստուգում բաղադրիչի սյունակում լրացվելու է 1-ին միջանկյալի գնահատականը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ծանոթանալ շրջաբերականին և ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – Ամբիոնի դասախոսների կողմից հրատարակած հոդվածների, գիտաժողովի նյութերի, գրքերի, ձեռնարկների մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը դասախոսներին տեղեկացրեց, որ մինչև նոյեմբերի 15-ը համալսարանի գիտահետազոտական կենտրոն պետք է ներկայացվեն 2020 թ. ընթացքում ամբիոնի դասախոսների կողմից հրատարակված հոդվածների, գիտաժողովի նյութերի, գրքերի, ձեռնարկների մասին տեղեկատվություն, ցանկում կարող են նշել նաև այն հոդվածները, որոնք ներկայացման պահին հրատարակված չեն, սակայն մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը հրատարակվելու են: Առաջարկվեց սեղմ ժամկետներում դրանք էլեկտրոնային տարբերակով ուղարկել ամբիոնի մեյլին՝ հատուկ մշակված ձևաչափում տեղադրելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 3. –. Աշխատակիցների առողջության ,,Կամավոր ապահովագրության,, պայմանագրի վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսներին տեղեկացրեց, որ համալսարանը ապահովագրական росгосстрах ընկերության հետ կնքել է պայմանագիր աշխատակիցների առողջության կամավոր ապահովագրության վերաբերյալ, որի առցանց օրինակը ուղարկվել է բոլոր աշխատակիցներին՝ դրույթներին ծանոթանալու համար: Ամբիոնի դասախոսներ Գ.Մուշեղյանը և Գ.Արաջյանը նշեցին, որ ծանոթ են պայմանագրի կետերին, և չեն ցանկանում մասնակցել: Մյուս աշխատակիցները արձագանքեցին դրական:

ՈՐՈՇԵՑԻՆ – Պատասխան գրությամբ տեղեկացնել կամավոր ապահովագրության ցանկացող աշխատակիցների տվյալները:

ԼՍԵՑԻՆ 4.– Երկրում ռազմական դրության հաստատման և դրա հետ կապված ուսուցումը հեռահար դարձնելու վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսներին տեղեկացրեց, որ երկրում ռազմական դրության հետ կապված դասերը ամբողջությամբ վերափոխվում են առցանց տարբերակի: Ստեղծված իրավիճակը դժվարացրել է դասերի նորմալ կազմակերպման ընթացքը, շատ ուսանողներ կան, որոնք մասնակցում են ռազմական գործողություններին բայց

պետք է հնարավորինս փորձել կազմակերպել պարապմունքները՝ հետագա խնդիրներից խուսափելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 5. – Դասընթացներում էլեկտրոնային մատյանների կիրառման վերաբերյալ հարցը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը հայտնեց էլեկտրոնային մատյանների վերաբերյալ նորությունը, որը մշակվել է համալսարանի կրթության բարեփոխումների և որակի վարչության կողմից՝ ուսանողների հաճախումները վերահսկելու նպատակով: Էլ. դասընթացների համապատասխան տիրույթում բացված են էջեր, որտեղ գրանցված են կուրսի բոլոր ուսանողները և դասախոսը, ամեն դասին նա պետք է կատարի հաշվառում, հետագայում էլեկտրոնային տեղեկագրերում հաճախում բաղադրիչի մեջ տվյալները ամփոփելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն և կատարել հաշվառում:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4.

2020թ. դեկտեմբերի 14-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի առցանց նիստ՝ բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Վերաբաշխման արդյունքում ամբիոնի ՊԴԱ ժամաքանակների ներկայացում.
2. Առաջին կիսամյակի միջանկյալ քննությունների անցկացման ժամանակացույցի և ձևաչափի քննարկում.
3. Առցանց դասաժամերի վերահսկման մեխանիզմների քննարկում.
4. Ամբիոնի աշխատակազմի առողջության կամավոր ապահովագրության պայմանագրի ստորագրում.
5. Ամբիոնի տարեկան հաշվետվության ամփոփում.

ԼՍԵՑԻՆ – Վերաբաշխման արդյունքում ամբիոնի ՊԴԱ ժամաքանակների ներկայացման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը նշեց, որ հեռակա ուսուցման համակարգի ընդունելության արդյունքների ամփոփման արդյունքներից հետո հաստատվել է ամբիոնի ՊԴԱ անձնակազմի վերջնական ժամաքանակները: Վերաբաշխման արդյունքում ամբիոնում կա 5329 ժամ, ամբիոնում հաստիքային փոփոխություն տեղի չի ունեցել:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – Առաջին կիսամյակի միջանկյալ քննությունների անցկացման ժամանակացույցի և ձևաչափի քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը նշեց, որ առաջին կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ ստուգումների ժամանակացույցը և անցկացման ձևաչափի շրջաբերականը էլեկտրոնային նամակով ուղարկվել է բոլոր դասախոսներին, նշեց, որ համաճարակային իրավիճակի և արտակարգ դրության հետ կապված քննությունները անցկացվելու են առցանց: Առաջարկեց ուշադրություն դարձնել միջանկյալների անցկացման ընթացքին, էլեկտրոնային հարթակում ժամանակին տեղադրել հարցաշարերը, ինչպես նաև կատարել գրառումներ էլեկտրոնային մատյաններում հաճախումների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 3. – Առցանց դասաժամերի վերահսկման մեխանիզմների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը տեղեկացրեց, որ առցանց դասաժամերը վերահսկվում են էլեկտրոնային կրթության կառավարման վաչության և համապատասխան ֆակուլտետների կոմպետենտ մասնագետների կողմից և հորդորեց, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվեն դասացուցակում ամրագրված ժամին համապատասխան և ավարտվեն ճիշտ ժամանակին, և եթե ինչ-ինչ պատճառներով կլինեն փոփոխություններ, այդ մասին անպայման հղում կատարել էլեկտրոնային հարթակում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 4. – Ամբիոնի տարեկան հաշվետվության հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսներին ներկայացրեց 2020թ. ամբիոնի տարեկան հաշվետվության նախնական տարբերակը, որտեղ սահմանված ձևաչափի համապատասխան հանգամանորեն նշված են հաշվետու տարում ամբիոնի կատարած գիտական, ուսումնական, մեթոդական աշխատանքների ծավալը, հրատարակած հոդվածների, կազմակերպած սեմինարների, միջոցառումների վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն և ներկայացրեց քննարման:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5.

2021թ. փետրվարի 3-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2020-21 ուս.տարվա էլեկտրոնայի տեղոկագրերի լրացման վերաբերյալ հարցը.
2. Էլեկտրոնային մատյանների լրացման կարգի վերաբերյալ հարցը
3. 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակի հեռակա ուսուցման դասացուցակի հաստատում
4. 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակի առկա բակալավր 1-4 կուրսերի առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների վերահաստատման վերաբերյալ հարցը

ԼՍԵՑԻՆ – 2020-21 ուս.տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնայի տեղոկագրերի և էլեկտրոնային մատյանների լրացման վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչի պ/կ Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսներին տեղեկացրեց, որ գնահատման համակարգի էլեկտրոնային տեղեկագրերում կան չլրացված տեղեկագրեր, առաջարկեց սեղմ ժամկետներում լրացնել բացթողումները: Անդրադարձավ նաև էլեկտրոնային մատյաններում հաճախումների վերաբերյալ նշումներ կատարելու վերաբերյալ հարցին, հորդորեց անպայման նշել բացակայությունները, գնահատման համակարգում տվյալները մուտքագրելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – 2020-2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակի հեռակա ուսուցման դասացուցակի հաստատման և 2-րդ կիսամյակի էլեկտրոնային դասընթացներում առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների վերահաստատման վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը ներկայացրեց 2020-21 ուս.տարվա 2-րդ կիսամյակի հեռակա ուսուցման դասացուցակը, նշեց, որ պարապմունքները կազմակերպվելու են բացառապես online տարբերակով, հեռակա ուսուցման 1-4 բոլոր կուրսերի համար բացված են էլեկտրոնային դասընթացները, տեղադրված են առարկայական նկարագրերը, հրավիրված են համապատասխան ֆակուլտետի ներկայացուցիչը, դասավանդող դասախոսները և ուսանողները: Ելույթ ունեցող դասախոսները նշեցին, որ դասընթացները համալրված են

անհրաժեշտ ուսումնական նյութերով և դասախոսություններով: Առկա ուսուցման համակարգի դասընթացների անցկացման կարգի վերաբերյալ նշեց, որ և 2-րդ կիսամյակի պարապմունքները կանցկացվեն հիբրիդային եղանակով, դասախոսությունները առցանց, իսկ գործնական պարապմունքները առերես: Հանձնարարեց էլեկտրոնային դասընթացներում տեղադրել առաևկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, միջանկյալ ստուգման թեմաները, գնահատվող էլեկտրոնային հանձնարարության թեմաները և ժամկետները: Հետևել, որ գնահատվող առաջադրանքի գնահատականները անպայման ուղարկվեն բոլոր ուսանողներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6.

2021թ. մարտի 2-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և հիգիենա, կամ տարիքային ֆիզիոլոգիա և դպրոցական հիգիենա առարկայի վերականգման և ուսումնական պլան այն ներառելու վերաբերյալ հարցը
2. Կրթության հոգեբանություն և Սոցոլագիայի ֆակուլտետում դասավանդվող Նեյրոֆիզիոլոգիա, տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և հիգիենա, դասընթացի տարանջատման մասնագիտական հիմնավորման և որպես առանձին դասընթացներ տարբեր մասնագիտություններում ներառելու հարցը
3. Մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի մասնագիտական պրակտիկայի ժամերի՝ ամբիոնին տրամադրելու հարցը
4. Ամբիոնի ֆեյսբուքյան էջի հետ ծանոթացում և ներկայացում
5. Քննական տարբերությունների հանձնման կանոնակարգի մշակում.
6. ՀՀ ում հաճախակի գրանցվող երկրաշարժերի հետ կապված սեմինարի կազմակերպում.

ԼՍԵՑԻՆ – Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և հիգիենա, կամ տարիքային ֆիզիոլոգիա և դպրոցական հիգիենա առարկայի վերականգման և ուսումնական պլանում այն ներառելու վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսական անձնակազմին ներկայացրեց ,,Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և դպրոցական հիգիենա,, դասընթացի կարևորությունը մանկավարժության մեջ, նշելով, որ մանկավարժական համալսարանում վերոնշյալ առարկան անտեսել՝ կապված աճող սերնդի դպրոցահասակ երեխաների ֆիզիկական ու մտավոր զարգացմանը նպաստող ֆիզիոլոգիական օրինաչափությունների ուսումնասիրության հետ, նշանակում է թույլ տալ կոպիտ մանկավարժական սխալ: Դասընթացը Խ.աբովյանի անվան ՀՊՄՀ –ում ներառված է միայն Հատում և ներառական կրթության երեք մասնագիտություններում, մինչդեռ այն հանդիսանում է մասնագիտական առարկա բոլոր մասնագիտությունների ուսանողների համար: Առաջարկվեց ,,Տարիքային անատոմիա և

ֆիզիոլոգիա,, դասընթացը վերափոխել ,,Տարիիքային անատոմիա,ֆիզիոլոգիա և դպրոցական հիգիենա,, դասընթացի և ներառել համալսարանի բոլոր մասնագիտություններում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – Մասնագիտական (Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և հիգիենա) դասընթացը ուսումնական պլաններում ներդրման և (Նեյրոֆիզիոլոգիա, տարիքային անատոմիա և ֆիզիոլոգիա, հիգիենա) դասընթացի տարանջատման վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը ներկայացրեց ԱՊՀ երկրների մանկավարժական համալսարանների ֆիզիոլոգիական առարկաների ցանկը, որտեղ ,,Տարիքային անատոմիա և ֆիզիոլոգիա,, դասընթացը համահամալսարանական է: Նշեց, որ նախկինում մեր համալսարանում նույնպես դա համահամալսարանական դասընթաց էր, սակայն ինչ-ինչ պատճառներով ուսումնական պլաններից հանվել է՝ պահպանվելով միայն հատուկ կրթության ֆակուլտետի մասնագիտություններում: Այդ առումով Ն.սահակյանը հարցին տալով մասնագիտական հիմնավորումներ՝ դիմելու է համալսարանի ուսումնական հարցերով պատասխանատու օղակներին, դասընթացը վերականգնելու նպատակով: Առաջարկվեց քվեարկել դասընթացը վերափոխելու ,,Տարիքային ֆիզիոլոգիա և դպրոցականի հիգիենա,, անվանումով, որը ավելի նպատակահարմար է մանկավարժական բուհի ուսանողների համար: Սահակյանը նշեց, որ Կրթության հոգեբանություն և Սոցոլագիայի ֆակուլտետում դասավանդվող Նեյրոֆիզիոլոգիա, տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և հիգիենա, դասընթացը ձևակերպված է մասնագիտորեն սխալ: Ներկայացվեց, որ նշված առարկաները հանդիսանում են ֆիզիոլոգիական գիտության կարևորագույն ուղղություններ, որոնք ունեն առանցքային նշանակություն ինչպես մանկավարժության այնպես էլ հոգեբանության կրթության մեջ, սակայն վերջիններս բնութագրվում են բացարձակ տարբեր նպատակներով և խնդիրներով, ուստի չեն կարող դասավանդվել համատեղ: Հետևաբար գտնում ենք, որ նշված դասընթացները պետք է դասավանդվեն առանձին, ընդ որում Կրթության հոգեբանություն և Սոցոլագիա բոլոր մասնագիտություններում Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և հիգիենա դասընթացը պետք է դասավանդվի առաջին կուրսում, իսկ վերջինիս հիքի վրա՝ Նեյրոֆիզիոլոգիա ԲՆԳ հիմունքներ դասընթացը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հիմնավորումները ներկայացնել համալսարանի համապատասխան օղակներին՝մասնավորապես ՀՊՄՀ ուսումնական գծով պրոռեկտոր ՊՆ Մ.Մելիք-Բախշյանին:

ԼՍԵՑԻՆ 3. – Պրակտիկայի ժամերի վերականգման և երկրորդ կիսամյակում ամբիոնում նախատեսվող միջոցառումների մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Սահակյանը նշեց, որ ԱԲՕ ԱԻ և ՔՊ ամբիոնը, որտեղ մասնագիտական ուղղություններից մեկը մարդու ֆիզիոլոգիան է, հանդիսանում է դպրոցական ծրագրում ներառված 8-րդ դասարանի առարկաներից մեկի՝ մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ամբիոն: Ամբիոնում պրակտիկայի ժամերի բացակայությունը ստեղծում է բարդություններ կոնկրետ այս դասընթացի դասավանդման ընթացքում: Պրակտիկայի ընթացքում տվյալ դասընթացից (անատոմիա, ֆիզիոլոգիա) ուսանողների մասնագիտական կարողությունները և դրանց պատրաստվածության աստիճանը չի վերահսկվում կոմպետենտ մասնագետի կողմից, ով պատասխանատու է մասնագիտական գիտելիքների որակի համար: Ուստի առաջարկվեց քննարկել ամբիոնին պրակտիկայի ժամերի տրամադրման առաջարկությունը: Սահակյանի կողմից ներկայացվեց երկրորդ կիսամյակում նախատեսվող միջոցառումների (ուսանողական գիտաժողովներ, կլոր սեղաններ, բաց դաս աշակերտների մասնակցությամբ), դասախոսների կողմից իրականացվող գիտական սեմինարների ցանկը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել համալսարանի պրակտիկայի վարչություն՝ պրակտիկայի ժամերը վերականգնելու հարցով:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7.

2021թ. մարտի 12-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ամբիոնի 2021-2026 թթ.ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանի քննարկում և հաստատում.
2. ,,COVID-19-ը մեզ հետ, մեր կողքին,, խորագրով առցանց սեմինարի հարցի քննարկում.
3. Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի 2021-2026 թթ.ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանի քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը նշեց, որ կրթության բարեփոխումների և որակի վարչության կողմից ամբիոններին ուղարկվել է ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2021-2025) գործողությունների կատարման պլանի օրինակը, ամբիոններին հանձնարարվել է սեղմ ժամկետներում ներկայացնել ամբիոնի ռազմավարական ծրագրի իրենց տարբերակը: Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսական անձնակազմին տեղեկացրեց, որ կազմվել է ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրի գործողություններից բխող Առաջին բուշօգնության, ԱԻ և ՔՊ ամբիոնի ռազմավարական ծրագրի (2021-2025թթ.)կատարման պլանը, որի էլեկտրոնային տարբերակը ուղարկվել է դասախոսներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ամբիոնի ռազմավարական ծրագրի (2021-2025թթ.) կատարման պլանը:

ԼՍԵՑԻՆ – ,,COVID-19-ը մեզ հետ, մեր կողքին,, խորագրով նախատեսվող առցանց սեմինարի քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը նշեց, որ հաշվի առնելով ներկա համաճարակային իրավիճակը, և այս առումով ուսանողների իրազեկվածության անհրաժեշտությունը, ամբիոնը ապրիլ ամսին նախատեսում է կազմակերպել առցանց սեմինար ,,COVID-19-ը մեզ հետ, մեր կողքին,, խորագրով՝ օգտագործելով համալսարանի էլեկտրոնային հարթակի google meet հավելվածը: Առաջարկեց դասախոսներին նախապատրաստվել և ուսանողների հետ պատրաստել ելույթներ և տանել աշխատանքներ այս ուղղությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8.

2021թ. մայիսի 6-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ,,COVID-19-ը մեզ հետ, մեր կողքին,, խորագրով առցանց սեմինարի արդյունքների քննարկում
2. Կրթության հոգեբություն և սոցոլագիա ֆակուլտետում կարդացվող (Նեյրոֆիզիոլոգիա, տարիքային անատոնիա և ֆիզիոլոգիա) դասընթացի վերափոխման և մասնագիտորեն ճիշտ ձևակերպված տարբերակով (Նեյրոֆիզիոլոգիա և ԲՆԳ հիմունքներ) ուսումնական պլաններում ներդրման և մասնագիտական պրակիտիկայի (Անատոմիա և ֆիզիոլոգիա) դասընթացի վերաբերյալ ԿՔԱ ֆակուլտետի գիտական խորհրդի որոշման մասին հարցը.
3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտանությունների անցկացման կարգի և Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում ուսանողների ակտիվ կամավորական գործունեության վերաբերյալ համալսարանի գիտական խորհրդի որոշման մասին հարցը.
4. Գիտության կոմիտեի հայտարարությունների մասին՝
   Elsevier ընկերության Science Direct և Scopus շտեմարաններ անվճար փորձնական մուտքի հնարավորության և մրցույթների մասին հարցերի քննարկում:
5. ԿՔԱ ֆակուլտետի կենսաբանություն մասնագիտության, մագիստրատուրա առաջին կուրսի ուսանողուհի՝ Իրինա Գևորգյանի հաշվետվությունը

ԼՍԵՑԻՆ – ,,COVID-19-ը մեզ հետ, մեր կողքին,, խորագրով առցանց սեմինարի արդյունքների քննարկման մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը հայտնեց, որ ելնելով հանրապետությունում առկա կորոնավիրուսային համաճարակի խնդիրներից, ամբիոնը ապրիլի 15-ին անցկացրեց ,,COVID-19-ը մեզ հետ, մեր կողքին,, խորագրով առցանց սեմինար՝ օգտագործելով համալսարանի էլեկտրոնային հարթակի google meet հավելվածը: Ն.Սահակյանը անդրադառնալով ուսանողների բարձր մակարդակով պատրաստվածության հանգամանքին և հաշվի առնելով այս ուղղությամբ ուսանողների իրազեկվածության անհրաժեշտությունը, կարևորեց նմանատիպ

սեմինարկերի կազմակերպման կարևորությունը և առաջարկեց շարունակել նմանատիպ միջոցառումների կազմակերպումը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Շարունակել նմանատիպ միջոցառումների կազմակերպումը:

ԼՍԵՑԻՆ 2. – Կրթության հոգեբություն և սոցոլագիա ֆակուլտետում կարդացվող (Նեյրոֆիզիոլոգիա, տարիքային անատոնիա և ֆիզիոլոգիա) դասընթացի վերափոխման և մասնագիտորեն ճիշտ ձևակերպված տարբերակով (Նեյրոֆիզիոլոգիա և ԲՆԳ հիմունքներ) ուսումնական պլաններում ներդրման և մասնագիտական պրակիտիկայի (Անատոմիա և ֆիզիոլոգիա) դասընթացի վերաբերյալ ԿՔԱ ֆակուլտետի գիտական խորհրդի որոշման և Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտանությունների անցկացման կարգի և Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում ուսանողների ակտիվ կամավորական գործունեության վերաբերյալ համալսարանի գիտական խորհրդի որոշման և գիտության կոմիտեի հայտարարության մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Տեղեկացվեց, որ հարցը քննարկվել է ԿՀՍ ֆակուլտետում և համատեղ (ԱԲ, ԱԻ և ՔՊ ամբիոն և ԿՀՍ ֆակուլտետ) համաձայնության արդյունքում որոշվել է հոգեբանություն մասնագիտության 1-ին կուրս 1-ին կիսամյակում նախկինում գոյություն ունեցող դասընթացը՝ Նեյրոֆիզիոլոգիա, տարիքային անատոմիա և ֆիղիոլոգիա, վերաձևակերպել Նեյրոֆիզիոլոգիա և ԲՆԳ հիմունեքներ դասընթացով: Ամբիոնի վարիչի կողմից ներկայացվեց նաև Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում ուսանողների ակտիվ կամավորական գործունեության վերաբերյալ համալսարանի Գիտական Խորհրդի որոշումը, համաձայն որի Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում ուսանողների ակտիվ կամավորական գործունեության համար նրանց կշնորհվեն հավաստագրեր, որոնք ավարտական աշխատանքի ժամանակ կհանդիսանան բաղադրիչ (հինգ միավոր): Ամբիոնի վարիչի կողմից ներկայացվեց նաև գիտության կոմիտեի կողմից իրականացավող նախագիծը; Նշվեց, որ մեր համալասարնը մինչև 2021թ հունիսի 30-ը ստացել է անվճար մուտքի հնարավորություն Elsevier ընկերության Science Direct և Scopus շտեմարաններ: Տեղեկացվեց, որ Elsevier ընկերության կողմից կանցկացվեն նաև մի շարք ուսուցողական վեբինարներ հետազոտողների, գրադարանավարների, դասախոսների, ասպիրանտների և ուսանողների համար (վեբինարների լեզուն՝ ռուսերեն), իսկ վեբինարների խորագրերը և ժամանակացույցը կուղարկվեն դասախոսների աշխատանքային էլ, հասցեներին, որտեղ կարող են ծանոթանալ

Elsevier մասնագիտական գործիքներին, (linker) գիտատեխնիկական տեղեկատվության հետ աշխատելու համար:

ԼՍԵՑԻՆ 3. – ԿՔԱ ֆակուլտետի կենսաբանություն մասնագիտության մագիստրատուրա առաջին կուրսի ուսանողուհի՝ Իրինա Գևորգյանի հաշվետվությունը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը առաջարկեց լսել ԿՔԱ ֆակուլտետի կենսաբանություն մասնագիտության մագիստրատուրա առաջին կուրսի ուսանողուհի՝ Իրինա Գևորգյանի մագիստրոսական թեզի հաշվետվությունը "Հեռավար կրթության հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները կորոնավիրուսային համաճարակի պայմաններում" թեմայով:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ատեստավորել.

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9.

2021թ. հուլիսի 7-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ,,Նեյրոֆիզիոլոգիա, Տարիքային անատոմիա և ֆիզիոլոգիա,, դասընթացի վերափոխման և ուսումնական պլաններում մասնագիտորեն ճիշտ ձևակերպված ,,Նեյրոֆիզիոլոգիա, ԲՆԳ հիմունքներ,, տարբերակով ներդրման վերաբերյալ հարցը.
2. 2020-2021 թթ ամբիոնում կատարված ուսումնագիտական աշխատանքների քննարկում
3. Ավարտական աշխատանքների բաշխման և դրանց իրականացման քննարկում
4. 2021-2022 թթ ուսումնական ծավալների, ամբիոնին հատկացված ժամաքանակների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածության քննարկում

ԼՍԵՑԻՆ – ,,Նեյրոֆիզիոլոգիա, Տարիքային անատոմիա և ֆիզիոլոգիա,, դասընթացի վերափոխման և ուսումնական պլաններում մասնագիտորեն ճիշտ ձևակերպված ,,Նեյրոֆիզիոլոգիա, ԲՆԳ հիմունքներ,, տարբերակով ներդրման վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակլանը տեղեկացրց, որ գրավոր հիմնավորումներով դիմել է Կրթության բարեփոխումների և որակի վարչության պետ Վ.Սարգսյանին և քննարկումների արդյունքում ԿՀՍ ֆակուլտետի հոգեբանություն մասնագիտության 1-ին կուրսի ուսումնական պլաններում դասընթացը վերաձևակերպվել է մասնագիտորեն ճիշտ՝ Նեյրոֆիզիոլոգիա, ԲՆԳ հիմունքներ անվանումով:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – 2020-2021 թթ ամբիոնում կատարված ուսումնագիտական աշխատանքների և ավարտական աշխատանքների բաշխման և դրանց իրականացման մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հաշվի առնելով ներկա համաճարակային իրավիճակը Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսական անձնակազմի կողմից անցնող ուսումնական տարվա ընթացքում կատարված ուսումնագիտական աշխատանքների ծավալը համարեց բավարար: Անդրադառնալով 2021-2022 ուս.տարվա ուսումնական ծավալներում ամբիոնին հատկացված ավարտական աշխատանքների ղեկավարում հարցին, նշեց, որ ամբիոնին հատկացված է 4

ուսանող, 2-ը առկա ուսուցման համակարգում, 2-ը՝ հեռակա: Դասաբաշխման ժամանակ դրանք կբաշխվեն ամբիոնի դասախոսների ծանրաբեռնվածության վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 3. – 2021-2022 թթ ուսումնական ծավալների, ամբիոնին հատկացված ժամաքանակների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածության մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Անդրադառնալով 2021-2022 ուս.տարվա ուսումնական ծավալների ժամաքանակին,Ն.Սահակյանը նշեց, որ նախորդ տարվա համեմատ նախնական հաշվարկի տվյալներով, ամբիոնի ժամաքանակը նվազել է մոտ 550 ժամով, որը համարժեք է 0,75 հաստիքի և կապված է դիմորդների քանակի, նախորդ տարվա համեմատ այս տարվա 4-րդ կուրսերում սովորող ուսանողների թվաքանակի նվազման, ինչպես նաև Արտակարգ իրավիճակներ և քաղպաշտպանության հիմունքներ համահամալսարանական դասընթացում ընթացիկ ստուգում բաղադրիչում տեղի ունեցած փոփոխության հետ: Այդ առարկայի ընթացիկ ստուգում բաղադրիչը փոխվել է ստուգարքով, որը առաջացրել է ժամաքանակի նվազում: Ն.Սահակյանը իր մտահոգությունը հայտնեց այս փաստի առնչությամբ, և հավելեց, որ ժամաքանակի վերջնական պատկերը պարզ կդառնա նոր ուսումնական տարվա բուհ ընդունված ուսանողների տվյալների հրապարաման օրից հետո: Յուրաքանչյուր դասախոսի էլեկտրոնային տարբերակով կուղարկվի իր դասախաշխման օրինակը, որից հետո միայն կներկայացվի հաստատման:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան